դրամայի թեմատիկ-գաղափարական և փիլիսոփայական ընդգրկումը շատ ավելի լայն է, քան ներկայացնում է այդ տեսակետներից յուրաքանչյուրը, նույնիսկ՝ քան երեքը միասին վերցրած: Բայց որ Չյոկյուրյանի մեկնակետը շատ հետաքրքիր կողմից է բաց անում հեղինակի մտահղացման իմաստը, անկասկած է: Այդ մեկնակետից վերլուծելով դրաման՝ բանախոսը հանգում է եզրակացությունների, որոնց զգալի մասը, հարկավ, չի կարող ընդունելի լինել ժամանակակից գրականագիտության համար: Բայց այդ եզրակացություններն իրենց պատմական արժեքն ունեն՝ իբրև գիտության զարգացման որոշակի փուլի արտահայտություն, հատկապես որ դրանցից շատերը հիմնավորված են և չեն կորցրել իրենց հետաքրքրությունը նաև այսօր:

Վիճելի է, օրինակ, Չյոկյուրյանի այն պնդումը, թե Շանթի հիմնական նպատակն է ցույց տալ մարդկային գոյության հավերժական ու անլուծելի դրաման՝ ողջախոհ բանականության և զգացմունքի պայքարը: Բանախոսի համոզմամբ՝ «Վանահայրը անշահախնդիր վերլուծման և եսամերժ մտածման նվիրված մարդկությունն է կամ որ նույնն է, միտքը, որ կ՛ուզե ազատիլ մեզ ապականող, կաշկանդող զգացումներեն, բարձրանալ բնազդներեն, որոնց ստրուկ գերեվարներն են մարդը, համայնքները և ազգերը»: «Իսկ Աբեղան – անիկա մարդկային մեծագույն զանգվածները վարող բնազդներու, զգացմանց խորհրդանշանն է»: Երկուսն էլ անպարտելի են, որը և, ըստ բանախոսի, օբյեկտիվորեն ցույց է տվել դրամայի հեղինակը: Վիճելի է նաև բանախոսի այն եզրակացությունը, թե ունայնության փոսի պատկերով հեղինակն արտահայտում է այն գաղափարը, թե՝ «Կյանքը՝ զգացման թե մտածման, ուրիշ բան չէ, եթե ոչ պատրաստություն մը անհույս վախճանի մը: Եվ եթե այդ փոսը սիրո կամ կյանքի երազովն իսկ լցվի, մենք կանգնած ենք կրկին անհուսության անդունդի վրա»: Չյոկյուրյանը վիճարկում է այս նույն եզրակացության հիման վրա արևելահայ քննադատության մեջ հայտնած այն տեսակետը, թե Շանթի դրաման զուրկ է դրական իդեալից: Բանախոսը գտնում է, որ արվեստի գործի վերաբերյալ առհասարակ չի կարելի դնել այդպիսի հարց. «Հին աստվածների» հեղինակի նպատակն է եղել ներկայացնել «ինչ որ կա մեր առջև իբր բիրտ իրականություն», ուստի արվեստագետից իրավունք չունենք պահանջելու այն, ինչ ինքը չի կամեցել դնել իր գործի մեջ: Եվ Չյոկյուրյանը ձևակերպում է իր հիմնական